



ՕԾՎԵՅ ՎԱՅՔԻ Ս. ՏՐԴԱՏ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՅԻՆ

Վայոց Ձորի Վայք քաղաքում ավարտվեց Սուրբ Տրդատ եկեղեցու շինարարությունը: Օգոստոսի 6-ին Ամենայն Հայոց Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ օծվեց նորակառույց եկեղեցին:

Եկեղեցու կառուցման առիթով ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորանքի խոսքեր ասացին նաև Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Ս. Մեսրոպ արքեպս. Աջճյանը, Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը:

Եկեղեցու կառուցման ծրագիրը կար դեռևս 1990 թվականին: Վայքի քաղաքապետարանը փրամադրել էր 1,7 հեկտար փարածք, և հոգելույս Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք կարարվել էր եկեղեցու հիմնարկների արարողությունը: Ֆինանսական միջոցների բացակայության պայմանով, սակայն, եկեղեցու կառուցումն ընդհատվել էր:

Միայն 1998 թվականին ԱՄՆ-ի Դեպրոյտ քաղաքում բնակվող մեր հայրենակիցներ, քեր և փիկին Գալուստ և Էմմա Սողոյանների ֆինանսական աջակցության շնորհիվ վերսկսվեց եկեղեցու շինարարությունը: Բարեսպաստ ընդհանրելը, ականջալուր Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի այն ժամանակվա վարիչ-քարտուղար Ս. Մեսրոպ արքեպս. Աջճյանի և Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպս. Մկրտչյանի՝ Հայաստանում եկեղեցաշինությանը նպաստելու հորդորներին, հանձն առավ եկեղեցու շինարարության ողջ ծախսերը: Աշխատանքները սկսվեցին 1998 թ. ապրիլի 15-ին և որոշ ընդհատումներով շարունակվեցին 15 ամիս: Այդ ընթացքում Ս. Աբրահամ եպս. Մկրտչյանի ձեռամբ և Ս. Մեսրոպ արքեպս. Աջճյանի հանդիսապետությամբ օծվեցին եկեղեցու գմբեթի և զանգակատան խաչերը՝ որպես մեր անխորտակ հավատի խորհրդանիշեր:

Կառուցվող եկեղեցու գլխավոր ճարտարապետն է Արծրուն Գալիկյանը: Կառուցման աշխատանքները վերահսկում էր 1700-ամյակի գրասենյակի ճարտարապետական գրասենյակը՝ Հրաչ Գասպարյանի ղեկավարությամբ: Ներագայում աշխատանքների ղեկավարումը ստանձնեցին Մայր Աթոռի ճարտարապետական գրա-

սենյակի փնտրեն Ռուբեն Ազադյանը և Սուրեն Գաթրճյանը: Շինարարությունը իրականացնում էր Մայիս Մկրտչյանը: Եկեղեցու արտաքին և մասամբ ներքին երեսապատումը կատարվել է սպիտակ կրաքարով, որը հայտնի է «Մոմիկ» անունով:

Եկեղեցին նախատեսված է 250 մարդու համար և ունի 2 զանգակատուն:

Եկեղեցին զարդարում են չորս մեծադիր նկարներ՝ Սուրբ Գայանեի և Սուրբ Հռիփսիմեի պատկերները, Նաղաշ Հովնաթանի հանրահայտ գործերի ընդօրինակությունները, իսկ Սուրբ Մեղանի Տիրամոր պատկերն ընդօրինակությունն է իսպանացի նկարիչ Մուրիլլոյի ստեղծագործության:

Եկեղեցու փայտե դռները քանդակված են ավանդական հայկական ոճով (հեղինակ՝ Տիգրան Զեյթյան), իսկ տաճարի նկարչական ողջ ձևավորումը կատարել է Ռուբերյո Կարապետյանը: Զահերի հեղինակն է Լևոն Պողոսյանը:

Տեր և փիկին Սողոմանները ոչ միայն հոգացել են շինարարության ողջ ծախսերը, այլև եկեղեցու օծման առիթով նվիրել անհրաժեշտ գույքը՝ քահանայական զգեստներ, եկեղեցական իրեր, արծաթե սկիհ, մյուռնաթափ աղավնի, ճաճանց, բուրվառ, թոց, որոնք հայկական արվեստի գործեր են:

Այսօր արդեն Արփա գետի աջ ափին գտնվող հովտին, սրագագաթ սարերի և ժայռերի միջից վեր է խոյանում հավաքի մի նոր տուն՝ գեղեցիկ մի եկեղեցի, որն առաջին անգամ լինելով կրելու է հայոց արքայի՝ Տրդատ Մեծի անունը: